ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2 նոյեմբերի 2023 թվականի N 1891-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 16-Ի N 791-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ Մ Ա Ս Ի Ն

Ղեկավարվելով «Գեոդեզիական և քարտեզագրական գործունեության մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ, 34-րդ և 37-րդ հոդվածների պահանջներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հուլիսի 16-ի «Կոորդինատային համակարգ, ինչպես նաև քարտեզագրագեոդեզիական ֆոնդից տեղագրական քարտեզների և հատակագծերի տրամադրման կարգը սահմանելու մասին» N 791-Ն որոշումը (այսուհետ՝ որոշում) շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«ԿՈՈՐԴԻՆԱՏԱՅԻՆ, ԲԱՐՁՈՒՆՔԱՅԻՆ, ԾԱՆՐԱՉԱՓԱԿԱՆ ՉԱՓՈՒՄՆԵՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ, ՊԵՏԱԿԱՆ ՏԵՂԱԳՐԱԿԱՆ ՔԱՐՏԵԶՆԵՐԻ ԵՎ ՀԱՏԱԿԱԳԾԵՐԻ ՄԱՍՇՏԱԲԱՅԻՆ ՇԱՐՔԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Գեոդեզիական և քարտեզագրական գործունեության մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Սահմանել, որ՝

1) Հայաստանի Հանրապետությունում, որպես ազգային գեոդեզիական կոորդինատային համակարգ, ենթակա է կիրառման WGS-84 (ՎԻ ՋԻ ԷՍ-84) (ARMREF 02) կոորդինատային համակարգը: WGS-84 (ՎԻ ՋԻ ԷՍ-84) (ARMREF 02) ազգային գեոդեզիական կոորդինատային համակարգում ստեղծված Ազգային գեոդեզիական ցանցի հիմնակետերի կոորդինատները, Հայաստանի Հանրապետության պետական մասշտաբային շարքի տեղագրական քարտեզներն ու հատակագծերը, ինչպես նաև բազային քարտեզագրական շերտերն օգտագործման համար բաց են և հասանելի.

2) WGS-84 (ՎԻ ՋԻ ԷՍ-84) (ARMREF 02) ազգային գեոդեզիական կոորդինատային համակարգում ստեղծված՝ Հայաստանի Հանրապետության պետական մասշտաբային շարքի տեղագրական քարտեզներն ու հատակագծերը, ինչպես նաև բազային քարտեզագրական շերտերը հիմք են բոլոր պետական նշանակության գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքների իրականացման համար.

3) WGS-84 (ՎԻ ՋԻ ԷՍ-84) (ARMREF 02) ազգային գեոդեզիական կոորդինատային համակարգում ստեղծված բազային տարածական տվյալների վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրվում է «Գեոդեզիական և քարտեզագրական գործունեության մասին» և «Տարածական տվյալների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների պահանջներին համապատասխան.

4) Հայաստանի Հանրապետությունում, որպես պետական բարձունքային համակարգ, ենթակա է կիրառման Բալթյան-77 բարձունքային համակարգը (ԲՀԲ-77).

5) WGS-84 (ՎԻ ՋԻ ԷՍ-84) (ARMREF 02) ազգային գեոդեզիական կոորդինատային համակարգում ստեղծված բարձունքային ցանցի գեոդեզիական բարձունքային համակարգից նորմալ բարձունքային համակարգին անցնելու համար ուղղումների հաշվարկը կատարվում է Հայաստանի Հանրապետության տարածքում ծանրաչափական հանույթի համակարգում (առանձին գեոդինամիկական պոլիգոններում

և (կամ) 1-ին և 2-րդ դասերի նիվելիրացման բոլոր հենանիշերի և դրոշմանիշերի վրա) իրականացվող ծանրության ուժի արագացման բարձր ճշտության դիտարկումներով (չափումներով): Ծանրաչափական չափումները պետական ծանրաչափական ցանցում իրականացվում են Միավորների միջազգային համակարգում (СИ): Որպես թույլատրելի միավոր ընդունված է օգտագործել նաև Գալ-ը.

6) պետական (ազգային) կոորդինատային և բարձունքային համակարգերում Հայաստանի Հանրապետության պետական տեղագրական քարտեզների մասշտաբային շարքը՝ 1:10000, 1:25000, 1:50000, 1:100000, 1:200000, 1:500000, 1:1000000 մասշտաբներով, տեղագրական հատակագծերի մասշտաբային շարքը՝ 1:500, 1:1000, 1:2000, 1:5000 մասշտաբներով.

7) Հայաստանի Հանրապետության պետական տեղագրական քարտեզներում և հատակագծերում արտացոլված բոլոր աշխարհագրական անվանումները, բացատրություններն ու ծանոթագրությունները տրվում են հայերենով, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև օտար լեզուներով:»:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի մարտի 11-ի «Հայաստանի Հանրապետության պետական մասշտաբային շարքը սահմանելու մասին» N 222 որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

02.11.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ